Հավելված N 2
2026 թվականի հունվարի 23-ին կնքված
1032-11002/2026-ԱՀԵՏ3 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 3. Երևան - 3 (Շենգավիթ, Էրեբունի, Նուբարաշեն) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2026-31.12.2026թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026-30.06.2026թթ. |
| Ներկայացման օր | 01.07.2026թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2026.08.06
10:32:24 AMT

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 125 շահառուի Երևանի Շենգավիթ և Էրեբունի համայնքներում: Սոցիալական աշխատողների կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 26 դեպքի վարում.
  - Սոցիալական նպաստ համակարգում վերահաշվառման կազմակերպում - 25,
  - Աջակցող միջոցների ստացման կազմակերպում -1,

  Սոցիալական աշխատողների անմիջական միջամտությամբ իրականացվել է.
  - ✓ 22 շահառուի համար աղբահանության վճարի արտոնությունից օգտվելու կազմակերպում,
  - ✓ 2 շահառուի համար աղբավճարի գերավճարի վերադարձի կազմակերպում,
  - ✓ 2 շահառուի համար սոցիալական նպաստը Ամեո բանկից Հայէկոնոմ բանկ՝ կենսաթոշակի քարտի վրա տեղափոխման կազմակերպում,
  - ✓ 10 շահառու ուղեկցվել է բանկ, բանկային քարտ ձեռք բերելու եւ կեսաթոշակը ստանալու համար:
  - ✓ 1 շահառու ուղեկցվել է բանկ կենսաթոշակի եւ ընտանեկան նպաստի բանկային քարտերը ստանալու համար, ստացվել է կենսաթոշակը եւ նպաստը:
  - ✓ 1 շահառուի համար բանկի աշխատակիցը ուղեկցվել է տուն դիմումը ստորագրելու համար:
  - ✓ 1 շահառու ուղեկցվել է բանկ դիմումը ստորագրելու համար:
  - ✓ 2 շահառուի համար ակտիվացվել է բանկային քարտը:
  - ✓ 3 շահառուի համար վարչական շրջանի սոցիալական բաժնից ձեռք է բերվել տակդիր:
  - ✓ 2 շահառուի համար վարչական շրջանի սոցիալական բաժնից ձեռք է բերվել սննդամթերքի օգնություն:

  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 32 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:

  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:

Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում Էրեբունի և Շենգավիթ համայնքների տնային պայմաններում խնամք ստացող շահառուներից միայն 2 շահառու է ի վիճակի եղել մասնակցել Շենգավիթի ցերեկային կենտրոնում կազմակերպված ներքոնշյալ միջոցառումներին.

- Էքսկուրսիա՝ Ջրաշուշանների լիճ, Դենդրոպարկ,
- Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային թատրոն, Ա.Խաչատրյան «Գայանե» բալետի ներկայացման դիտում:

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 125 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների, կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 125 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 70 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 18 շահառու ուղեկցվել է տեղամասային պոլիկլինիկաներ, կազմակերպվել է հետազոտություն, տրամադրվել է խորհրդատվություն, նշանակվել է դեղորայքային բուժում: 8 շահառուի համար կատարվել է ուղեգրի գրանցում, շահառուները ուղեկցվել են բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով, այդ թվում նեղ մասնագետների մոտ: 34 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա: 2 շահառուի համար կատարվել է դեղորայքի գնում դեղատոմսով: 17 շահառուի համար դեղորայքի գնում դեղատնից: 3 շահառուի համար կատարվել է վիրակապում: 4 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում: 2 շահառուի համար գրանցվել է շտապ օգնության կանչ, բժշկի կողմից կատարվել է խորհրդատվություն, նշանակվել է բուժում: 1 շահառուի համար ձեռք է բերվել տեղամասային պոլիկլինիկայից քաղվածք ամբուլատոր քարտից, տրվել է շահառուին: Բժշկական մասնագիտական խորհրդատվություն է տրամադրվել 7 շահառուի:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Էքսկուրսիա Ջրաշուշանների լիճ, Դենդրոպարկ,
  (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/r/1CeUngv7T2/),

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար.

- «Փախստականների եւ ընդունող համայնքների հզորացում աշխատաշուկայում, մրցունակության բարձրացում եւ ակտիվ աջակցություն կայուն ինտեգրման համար» ծրագրի շրջանակում. Շենգավիթ, Էրեբունի, Նուբարաշեն տնային սպասարկման աշխատակիցները մասնակցել են. մասնակցել են. SPHERE ընթացակարգեր, սեռական շահագործման, բռնության, հետապնդման կանխարգելում եւ վարքագծի կանոնագիրք դասընթացին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 125 / 125 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 117 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 8 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 8 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 117 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 19<br>Բ - 106 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 125 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 125 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 125 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 2 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 55 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն | 32 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «01» 07.2026թ.

(ստորագրություն, անուն,ազգանուն)